Արձանագրություն N 3

ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/5 ծածկագրով էլ.աճուրդի ընթացակարգով Ծաղկաձոր համայնքի կարիքների համար լուսադիոդային լուսատուների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 22 նոյեմբերի 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

անդամներ՝ Լ.Սարգսյան

Վ.Հայրապետյան

Է.Հովհաննիսյան

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Ընդունել ի գիտություն, որ՝

Հանձնաժողովի նախագահ Գ.Հայրապետյանը և հանձնաժողովի անդամ Ն.Խաչատրյանը գործուղման մեջ են և չեն մասնակցում նիստին:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 26-րդ կետի 1-ին մասը՝ հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության պատճառով նիստը նախագահում է հանձնաժողովի անդամ Է.Հովհաննիսյանը:

1. Էլ.աճուրդի ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Է.Հովհաննիսյան)

Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում «Էներջի Սեյվինգ» ՍՊԸ-ն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

1.2 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.1 Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը և մասնակցի կոոմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը՝

Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Էներջի Սեյվինգ» ՍՊԸ-ին:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հաստատման մասին

(Է.Հովհաննիսյան)

Հաստատել **ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/5** ծածկագրով էլ. աճուրդի ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի

անդամներ՝ Լ.Սարգսյան

Վ.Հայրապետյան

Է.Հովհաննիսյան

քարտուղար՝ Ա.Ավետիսյան